

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԵՎ
ՍՈՑՄԵԴԻԱՅԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ
ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հոկտեմբերի 1 – դեկտեմբերի 31, 2020 թ.



ԻՐԱՉԵԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻԱԿՈՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում հայկական լրատվամիջոցներում և սոցիալական մեդիայում քննարկվող հիմնական թեմաները պտտվում էին Ռուսաստանի հետ փոխհարաբերությունների շուրջ: Շրջանառվող թեզերը շղթայի պես փոխկապակցված էին և տրամաբանորեն հաջորդում էին իրար: Այսպես, հուլիսից-դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում պարբերաբար տարածվում էր հակառուսական Հայաստանի մասին թեզը, որին զուգահեռ՝ շրջանառվում էր պրոարևմտյան Հայաստանի մասին թեզը: Ըստ թեզերը տարածող շրջանակների՝ հենց դա էլ շարունակաբար քանդում էր և վերջնականապես քանդեց երկիրը՝ հանգեցնելով պատերազմի: Պատերազմի ընթացքում ակտիվացան հողատու և դավաճան իշխանության մասին թեզերը, որից գերծ չմնացին նաև քաղաքացիները:

Հայ-ռուսական հարաբերություններ

«Հակառուսական» Հայաստան

2020 թ. երկրորդ կեսը մեկնարկեց Ռուսաստանում անցկացվող Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեով: Թեման լուսաբանվում էր նաև հայկական որոշ լրատվամիջոցներով, իսկ դրանցից, թերևս, ամենամեծ լսարանն ունեցող Հանրային հեռուստատեսության [ռեպորտաժի](#), որում ներառված էր Ռուսաստանի ընդդիմադիր գործիչ Ալեքսեյ Նավալնիի տեսակետը, դարձավ մանիպուլյատիվ և քարոզչական թեզերի առիթ:

Թեև լրագրողական անաչառության տեսանկյունից ռեպորտաժն անխոցելի էր, սակայն փաստը, որ ընդդիմադիր Նավալնին հայտնվել է Հանրային հեռուստատեսության եթերում, [դուր չէր եկել](#) ռուսական քարոզչամեթոդային առաջամարտիկներից Վլադիմիր Սոլովյովին (34:30): Դրան արձագանքելով՝ Նավալնին իր ուղիղ եթերում [հայտարարեց](#). «Հայաստանը դադարեց Վլադիմիր Սոլովյովի համար բարեկամական երկիր լինել, քանի որ այնտեղ ցույց են տալիս ինձ...»: Այս և սրան նախորդող մի շարք զարգացումներ Հայաստանում բորբոքեցին երկրում հակառուսական տրամադրություններ ստեղծող արևմտամետ իշխանությունների մասին թեզը:

Որոշ ընդդիմադիրներ [ակնեցին](#), թե ռուսական ռազմաբազան պատրաստվում են երկրից դուրս բերել, որոշներն էլ Հայաստանի համար [կանխատեսեցին](#) Ուկրաինայի ապագան, իսկ Փաշինյանին [համեմատեցին](#) Սահակաշվիլիի հետ:

Հայ-ռուսական հարաբերությունների մասին քննարկումներն է՛լ ավելի խորացան հայ-ադրբեջանական սահմանին սկսված [լարվածության](#) ֆոնին: Մինչ երկրի ներսում իշխանությունն ու ընդդիմությունը փորձում էին պարզել՝ բանական [ուժեղացել է](#), թե՞ [թուլացել](#), կամ ո՞վ է ավելի լավ ընդդիմություն՝ նախկինները, թե՞ [ներկաները](#), արձագանքներ եղան դրսից: Նախ, ՀԱՊԿ-ն սահմանային բախումները դադարեցնելու անհասցե [կոչ արեց](#), ապա Կրեմլի «քարոզչական հրետանի», հայազգի Մարգարիտ Սիմոնյանը Հայաստանի իշխանությանը քննադատող [գրառում կատարեց](#):

Այս ամենի ֆոնին ոմանք մեղադրեցին իշխանություններին հակառուսական քաղաքականություն վարելու մեջ, ոմանք էլ փնտրում էին Russia Today-ի խմբագիր Սիմոնյանի, ապա և նրա ամուսնու գրառումների տողատակերը և կապում դրանք ռուսական վերնախավի հետ:

Այսպես, «Այլընտրանքային նախագծեր խմբի» անդամ Վահե Հովհաննիսյանը, օրինակ, [այնդում էր](#), թե «երկրում պետք է դադարեցնել հիբրիդային հակառուսականությունը», քանի որ «*Թուրքիայի բաց տեքստով սպառնալիքների ֆոնին երկրի ներսում հակառուսական տրամադրություններ տարածելը հավասար է ներքին դիվերսիայի*»:

Իսկ «Իրավունք» թերթը հուլիսի 22-ի համարում [գրել էր](#), թե «*վերջին շաբաթներին մեկը մյուսի հետևից հակառուսական ծրագրեր են բերվում հայաստանյան օրակարգ, և*

*կորոնավիրուսի քողի տակ նրանցից շատերն արագ-արագ «դակվում են» ԱՇ-ում»:
«Տեսականորեն կարելի է նաև այդպես «դակել» ռուսական ռազմաքաղաքական Հայաստանից
հանելու հարցը»,- մտահոգվել էր հոդվածի հեղինակը:*

7or.am կայքն էլ վերլուծական հոդվածում [գրել էր](#), թե Ռուսաստանի իշխանությունը «խոսեց» իր քարոզչական «հրետանավորներից» Մարգարիտա Սիմոնյանի միջոցով: «Այն, որ դրանք պարզապես ազգանվան «յան» վերջավորությամբ մի անձնավորության անհատական դիտարկումներ չէին, չեն կռահում միայն անուղղելի «թավջիստները», թերևս»,- կարծում է կայքի հոդվածագիրը: Հակառուսական տրամադրությունների թեման կրկնակի թափ հավաքեց, երբ Մարգարիտա Սիմոնյանի ամուսինը՝ Տիգրան Բյուսայանը Twitter միկրոբլոգի իր էջում կնոջ ավելի վաղ արված աղմկահարույց գրառմանը սատարող [գրառում կատարեց](#): Բյուսայանը հայտարարեց, թե կնոջ գրառումից հետո իրեն հայիոյում են, պահանջում փոխել կնոջ ազգանունը, և եզրակացրեց. «Այդ ամենը խոսում է միայն մի բանի մասին՝ գույնզգույն-երիտասարդ սորոսականներին՝ Փաշինյանի գլխավորությամբ, արդեն ինչ-որ բան հաջողվել է անել իմ հնազույն ազգի մի մասի հետ»:



Արևմտյան շրջանակների կողմից հակառուսական տրամադրությունների հրահրման մասին թեզի հերթական ալիքը սկսվեց «Դոսյե» կենտրոնի հրապարակած ծավալուն հետաքննական [հոդվածից](#) հետո, որը, ըստ տեղեկությունների, ֆինանսավորվում է Ռուսաստանի ամենահարուստ գործարարներից մեկի, այժմ վտարանդու կարգավիճակով արտասահմանում գտնվող Միխայիլ Խադարկովսկու կողմից: Հոդվածում, մասնավորապես, նշվում է, թե ինչպես է Ռուսաստանը միջամտում հարևան երկրների ներքին քաղաքականությանը: Ըստ «Դոսյեի»՝ Հայաստանի նախկին ԱԱԾ պետերը, գաղտնի գործակալները Հայաստանի վերաբերյալ տեղեկություններ են հաղորդում ռուսական հատուկ ծառայություններին:

Այս առիթով «Այլընտրանքային նախագծեր խումբը» վերլուծական հոդված էր [հրապարակել](#), որտեղ առաջ էր քաշվում թեզը, թե «Դոսյեի» նպատակը հակառուսական

տրամադրությունների ակտիվացումն է: Խումբը նաև առաջարկել էր բացահայտել արևմտյան գործակալներին. *«Եթե ԱԱԾ-ն քրեաիրավական խնդիր է տեսնում, որ «Դոսյեում» նշված տարբեր անձինք կարող են գտնված լինել ռուսական ազդեցության տակ, ապա նույնը պետք է արվի արևմտյան ազդեցության գործակալների հանդեպ»:*

«168 ժամ» թերթն էլ հերթական հարցազրույցն էր վերցրել ռուս քաղաքական վերլուծաբան Ստանիսլավ Տարասովից, որը փորձել էր հիմնավորել, թե ինչու ԱԱԾ-ում չկա ռուսական կենտրոն: *«Եթե, ինչպես շատերն են մտածում և կարծում, և, ինչպես նկարագրվում է այս հրապարակման մեջ, ՀՀ ԱԱԾ-ում լինել ռուսական կենտրոն և ցանց, ապա այդ կենտրոնը Սերժ Ազատիչին կօգնել պահել իշխանությունը»,- [ասել էր](#) Տարասովը:*

Արցախյան 44-օրյա պատերազմ

Հաշվետու ժամանակահատվածի երկրորդ եռամսյակում Հայաստանի և Արցախի ողջ մեդիատիրույթը ողողված էր սեպտեմբերի 27-ից սկսված, արցախա-ադրբեջանական սահմանին ընթացող պատերազմի մասին տեղեկություններով, որոնցում տեղ էին գտել նաև մանիպուլյացիաներ և քարոզչական թեզեր:

Ինչու՞ ստացանք պատերազմ

Արցախում ռազմական գործողությունների մեկնարկի առաջին իսկ րոպեներից ընդդիմադիր ուժերը մեկը մյուսի հետևից հայտարարեցին, որ սառեցնում են ներքաղաքական օրակարգը, իշխանությունն էլ, իր հերթին, մեխանիզմներ [մշակեց՝](#) լրատվամիջոցներին պարտավորեցնելով տալ միայն պաշտոնական տեղեկատվություն:

Սակայն առանձին լրատվամիջոցներ և հանրային դեմքեր պարբերաբար շրջանառության մեջ էին դնում քարոզչական թեզեր, որոնցից ամենատարածվածը փչացած հայ-ռուսական հարաբերություններն են, որի հետևանքն էլ այդ պատերազմն էր:

Ռուս քաղաքագետ Վլադիմիր Լեպեխինը, օրինակ, «Իրավունք» թերթի հետ զրույցում [հիշեցրել էր](#) վարչապետ Փաշինյանի՝ բազմավեկտոր քաղաքականություն վարելու մտադրության մասին, որ Հայաստանը պատրաստվում է համագործակցել և՛ ՀԱՊԿ-ի հետ, և՛ ՆԱՏՕ-ի հետ: Քաղաքագետը եզրակացրել էր, որ «այս ֆոնին Ադրբեջանում որոշ ռազմական ղեկավարների մոտ պատրանք է առաջացել, որ եթե Հայաստանի և Ռուսաստանի միջև հարաբերություններն այդքան էլ լավ չեն, ապա կարելի է ստուգել դրանց ամրությունը: Եվ հիմա ստուգում են այդ հարաբերությունների ամրությունը»:

Իսկ «Հայելի» մամուլի ակումբում նախկին հանրապետական Մենուա Հարությունյանը [առաջ էր տարել](#) այն թեզը, թե՛ նոր իշխանությունները փչացրել են հարաբերությունները Ռուսաստանի հետ, այդ պատճառով Թուրքիան չի վախեցել, և հայ-ադրբեջանական բախումների ժամանակ ադրբեջանցիների հետ հարձակվել են հայերի վրա:

Իշխանավոխությունը պատերազմի օրերին

Վերը նշված ասուլիսի ընթացքում Մենուա Հարությունյանը զարգացրել էր Հայաստանի և Արցախի միայնակ, ավելի ճիշտ առանց Ռուսաստանի մնալու թեզը, և առաջիններից մեկն էր, որ պահանջեց գործող «հակառուսական իշխանության» հրաժարականը՝ Փաշինյանի գլխավորությամբ՝ հենց պատերազմի օրերին:

«Ես ակնկալում եմ, որ գոնե մի անգամ Նիկոլ Փաշինյանն իր անձնական շահերը կստորադասի պետական շահերին, գոնե մի անգամ հարգանք կցուցաբերի մեր ժողովրդի նկատմամբ, կասի՝ ես ավելի լավ ա պաշտոն չունենամ, բայց մեր ժողովուրդը չկոտորվի, և իշխանությունը գեղեցիկ կհանձնի հայ-ռուսական հարաբերությունների կողմնակից մարդկանց, որպեսզի հայ-ռուսական հարաբերությունները ամրանան և թուրքերը վախենան մեզանից», - ասել էր Հարությունյանը:



Իսկ պատերազմի օրերին խիստ ակտիվ «Հրապարակ» թերթը [գրել էր](#), թե Փաշինյանը պետք է հեռանա վարչապետի պաշտոնից, քանի որ միջազգային արեւնայում ոչ ոք իր անձի հետ հաշվի չի նստում, ինչն էլ Ադրբեջանին և Թուրքիային թներ է տալիս:

Շուշին հանձնել են առանց կրակոցի

Շուրջ 45 օր տևած պատերազմն ավարտվեց Նոյեմբերի 10-ին՝ Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի միջև ընդունված հայտարարության հրապարակմամբ: Ըստ [հայտարարության](#)՝ ոչ միայն տարիներ շարունակ պահանջվող 7 շրջանները, այլև Արցախի բուն տարածքի մի մասն անցնում էր Ադրբեջանի վերահսկողության տակ՝ այդ թվում Հադրուբը և Շուշին, որոնք, ըստ պաշտոնական տեղեկատվության, Ադրբեջանը գրավել էր: Լրատվական դաշտում, սակայն, կայծակնային արագությամբ տարածվեց թեզը, թե Շուշին հնարավոր չէ գրավել, այն հանձնվել է առանց կրակոցի: Օդում կախված լուրերով հիմնավորված այս թեզը տարածվեց նաև համեմված դավադրության տեսություններով և աստվության խոսքով:

Այսպես, 7or.am կայքը խորհրդանշական համարեց, որ դավաճանական ու կապիտուլյացիոն ակտ ստորագրած Նիկոլ Փաշինյանը Հայաստանի վարչապետ է ընտրվել մայիսի 8-ին՝ Շուշիի ազատագրման օրը: «*Միայն մեկ հարց է բաց մնում: Նիկոլ Փաշինյանը*

գիտակցաբա՞ր գնաց կապիտուլյացիայի, թե՞ այդպես ստացվեց: Այլ կերպ ասած՝ նա դավաճա՞ն է, թե անմեղսունակ: Չի բացառվում, որ երկուսը միասին», - [գրել է](#) կայքը:

Բացի հրապարակային գրառումներից, ընդդիմադիր 17 կուսակցությունները սկսեցին նաև բողոքի ցույցեր՝ վարչապետ Փաշինյանի հրաժարականի պահանջով, որոնցից մեկի ժամանակ էլ «Ադելվատ» միաբանության անդամ Կոնստանտին Տեր-Նակալյանը [հայտարարեց](#). «Նիկոլ Փաշինյանը ստում է, մենք ճուշին չենք հանձնել թուրքին, ճուշին հանձնել է թրքաժաման հայերի կոտորելը, որոնց պարագլուխը Նիկոլ Փաշինյանն է, դա եղել է դավաճանություն»:

Դավաճանների փնտրտուք

Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարությունը՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, մեղադրվեց ոչ միայն ճուշին հանձնելու, այլ նաև պիտակավորվեց որպես դավաճան՝ «Նոր Հայաստան» առանց Արցախ թողնելով:

Թեզի ջատագովներից էր «Քաղաքացիական գիտակցություն» ՀԿ նախագահ Նարեկ Սամսոնյանը, որն իր ֆեյսբուքյան էջում [գրեց](#). «Դավաճան Նիկոլը, որ ասում էր «Նոր Հայաստան», նկատի ուներ Արցախը հանձնած, ճուշին ու Հադրութը հանձնած... Դավաճանների խմբի «Նոր Հայաստանը» փորձանք ու ավեր դարձավ հարյուր հազարավոր ընտանիքների համար, դժբախտացրեց և անտուն թողեց մեր եղբայրներին ու քույրերին: Անիծվի քո բերած «Նոր Հայաստանը», տականք գլխակեր»: Գրառման վերջում Սամսոնյանը սպառնաց, թե վարչապետը սերունդներով է պատասխան տալու:

Այդ օրերին սոցիալական ցանցում շատ ակտիվ էր տևական ժամանակ պասիվացած Միքայել Մինասյանը՝ Սերժ Սարգսյանի փեսան և Սուրբ աթոռում նախկին դեսպանը: Ֆիզիկապես հանրահավաքներին ներկա գտնվելու հնարավորությունից զրկված Մինասյանը ֆեյսբուքյան իր էջում հերթական գրառման մեջ [լրեց](#). «Հայաստան պետությունը խոցված է: Կոմայի մեջ է: Նիկոլով հայ ժողովուրդը մնաց անտեր: Աշխատում է միայն ԱԱԾ-նստիկանություն-դատախազություն-դատարան դժոխային քառյակը: Նրանց գործն է՝ պահել Նիկոլի իշխանությունը: Միայն բռնում են ու նստացնում: Մաֆիական խմբերը զինվել են ու պաշտպանում են անձամբ Նիկոլին ու նրա ընտանիքին: Պարտված, ծնկած, հայրենիքի դավաճան վիժվածքին, որն այն կործանեց: Սա՞ էր ձեր պատկերացրած «Նոր Հայաստանը»՝ առանց Արցախի, առանց Մեղրիի, առանց նախարարությունների ու առանց հաղթական աչքերով տղերքի: Ու եղբանից հետո մինչև ատամները զինված ուզո՞ւմ եք պահել իշխանությունը: Դավաճան վիժվածքներ, բոլորդ պատասխան եք տալու»:

Դավաճաններ էր փնտրում նաև իշխանությունը՝ վարչապետ Փաշինյանի գլխավորությամբ, որը ֆեյսբուքյան եթերի ժամանակ [հայտարարեց](#). «Այսօր մի ընդդիմադիր քաղաքական գործիչ, որն իմ հրաժարականն է պահանջել, երեկ չէ առաջին օրը ճոշի դիրքերը թողել փախել է՝ գեներալի ուսադիրներով, այսօր եկել ասում է՝ մեր բանակի կողքին կանգնած ենք»:

Հերթական եթերով էլ վարչապետը ծուշիի անկումը կապեց Գագիկ Ծառուկյանի անվան հետ՝ [նշելով](#), որ վերջինս հանդիպել է կամավորների հետ, բայց այդպես էլ չեն տեսել Նրա զխավորությամբ կամավորական ջոկատ՝ ծուշիի մոտ կռվելիս: *«Գուցե հենց դա է պատճառը, որ ծուշին ընկավ»*, - հայտարարեց Փաշինյանը:

Իշխանության ներկայացուցիչներն իրենց տեսակետը հիմնավորելու համար իրենց Ֆեյսբուքի էջերում զինվորների մասնակցությամբ բռնության կոչեր պարունակող տեսանյութեր էին տարածում, որոնցում վերջիններս կոչ էին անում ժողովրդին չտրվել հանրահավաք կազմակերպողների սադրանքներին և կանգնել վարչապետ Փաշինյանի կողքին:

Նմանատիպ տեսանյութեր էին տարածել, մասնավորապես, ԱԺ փոխնախագահներ [Լենա Նազարյանն](#) ու [Ալեն Սիմոնյանը](#):

Առավել ուշագրավ էր, սակայն, որ նմանատիպ տեսանյութ [ցուցադրվեց](#) Հանրապետության հրապարակում տեղադրված մեծ էկրանին: Տեսանյութում զինվորականները հայիոյանքներ էին հնչեցնում Ազգային ժողով մտած քաղաքացիների հասցեին: Հատկանշական է, որ արդարացիորեն հնչող քննադատությունների հետ մեկտեղ, քարոզչական դաշտում գրանցվեց հերթական ատելությամբ պայքարը ատելության խոսքի դեմ: Այս անգամ թիրախավորվեց Լենա Նազարյանը, որի հասցեին հնչեցվում էին վիրավորանքներ և հայիոյանքներ:

ՀՀԿ-ականների մարգարեությունը. «հող հանձնողները»

ԱԺ փոխնախագահի շուրջ քննարկումները դեռ չմարած՝ վերջինս նորից հայտնվեց թիրախում: Այս անգամ առիթը «Առավոտ» օրաթերթին տված հարցազրույցն էր, որի ժամանակ Լենա Նազարյանն [ասել էր](#), որ հեղափոխությունից հետո իրենց մեղադրում էին



հող հանձնելու մեջ, նախկինները մարգարե չէին, հետևաբար գիտեին, որ այդ ամենը ներկա իշխանությունների գլխին է ջարդվելու:

Թեմայի շուրջ նախկիններից ՀՀԿ-ական Արմեն Աշոտյանը «համեմատական վերլուծություն» էր կատարել խոսափողի և Նազարյանի միջև: *«Ազգային ժողովի ամբիոնի խոսափողն ավելի լուրջ և խորը պատկերացումներ ունի Արցախյան հիմնախնդրի մասին, քան սույն, ժողովրդի հաշվին այլևս լավ «դժված» մանդատավոր տիկինը»*,- [գրել էր](#) Աշոտյանն իր ֆեյսբուքյան էջում:

Իսկ Hayeli.am կայքն իր «Տիկին, կողմնորոշվեք, միգուցե դուք LQFS ե՞ք» վերնագրով հոդվածում լրատվամիջոցին ոչ հատուկ բառամթերքով [գրել էր](#), թե *«պատերազմն ու պարտությունը, ապա և կապիտուլյացիայի խայտառակ փաստաթուղթը վերջնականապես գրկել է Նիկոլ Փաշինյանի մանկամտուրի ամենամանկամիտի՝ Լենա Նազարյանի ուղեղի կուսությունը»*:

Լուծումը Սորոսի գրասենյակները փակելու մեջ է

Պատերազմը պարտվելու և «հողերը հանձնելու» մեջ մեղքի բաժին վերագրվեց նաև «Սորոսի գրասենյակին»: Մասնավորապես, առաջ էր տարվում թեզը, թե Հայաստանը կարող է գոյատևել միայն Ռուսաստանի հետ սերտ դաշինքում, իսկ «Սորոսի գրասենյակները» հակառուսական քարոզ են տանում, հետևաբար պետք է փակել «թշնամու ջրաղացին ջուր լցնող գրասենյակները»: Մշտապես արտախորհրդարանական ընդդիմադիր ուժերի կողմից առաջ տարվող այս թեզն այս անգամ առաջ տարավ ԲՀԿ-ական պատգամավոր Նաիրա Չոհրաբյանը: *«Երբևէ չէի մտածի, որ մի օր կոչ եմ անելու փակել Հայաստանում էս տականքի կողմից ֆինանսավորվող ամեն ինչ»*,- [գրել էր](#) Չոհրաբյանն իր ֆեյսբուքյան էջում՝ տեղադրելով Չորջ Սորոսի լուսանկարը:

Իսկ «Փաստ» թերթը թարգմանաբար ներկայացրել էր News-front.info կայքի հոդվածը, որտեղ բառացի կոչ էր արվում Հայաստանը դարձնել Ռուսաստանի մի մաս: *«Ներկայիս ռազմական պարտությունը Հայաստանը և ամբողջ հայ ժողովուրդը կարող է հեշտությամբ վերածել ռազմավարական հաղթանակի: Բավական է ուղղակի վերջ տալ քեռի Սորոսի դրածոներին լսելուն և ընդունել մեկ պարզ ճշմարտություն, այս աշխարհում Հայաստանը կարող է գոյատևել միայն Ռուսաստանի հետ սերտ դաշինքում, իսկ իդեալականն է ընդհանուր պետության մաս կազմելը»*,- [գրել էր](#) թերթը:

Պուտինը սատարում է Փաշինյանին, թե՞ ոչ

Կարծիքը, որ արևմտյան ուժերը սատարում են Փաշինյանին, կասկածի տակ չէր դրվում, սակայն Կրեմլի և հատկապես Պուտինի աջակցության լինել-չլինելու փաստը միմյանց հետ պարզում էին իշխանությունն ու ընդդիմադիր շրջանակները: Առիթը Պուտինի հարցազրույցն էր, որի առանձին հատվածներ իշխանությունն ու ընդդիմությունը

մեկնաբանեցին ըստ ճաշակի: ՌԴ նախագահը, մասնավորապես, [ԼՂԵՂ](#), թե վարչապետ Փաշինյանի հասցեին հնչող դավաճանության մեղադրանքներն անհիմն են:

Այսպես, «Հրապարակ» թերթին տված հարցազրույցում ԲՀԿ-ական պատգամավոր Նաիրա Չոիրաբյանը [ԼՂԵՂ](#) *«Պուտինի և Ռուսաստանի համար Նիկոլը դավաճան չէ, ավելին, Ալիևի և Ադրբեյջանի համար գուցե ազգային հերոս է, բնավ չեմ բացառում, որ Ալիևն այդ նախաձեռնությամբ հանդես գա, որովհետև 30 տարի ուզում էր լուծել Արցախի խնդիրը, իսկ Նիկոլն Արցախը նվիրեց Ալիևին»:*

Իսկ «Այլընտրանք» ՀԿ հիմնադիր, Քոչարյանի աջակից Նարեկ Մանթաշյանն էլ վստահաբար [պնդեց](#), թե Փաշինյանի աջակիցները ռուսերեն չգիտեն, և որոշեց հատուկ նրանց համար Պուտինի հարցազրույցը «թարգմանել». *«Պուտինը ասումա, որ Նիկոլը դավաճան չի, բայց դավաճանության աստիճան դեբիլա...»:*

Իսկ զուգահեռ իրականության մեջ իշխանական թիմից ԱԺ փոխնախագահ Ալեն Սիմոնյանը, օրինակ, «Թվիթերի» իր էջում որոշեց [տարածել](#) Պուտինի հարցազրույցի միայն այն հատվածը, որտեղ ՌԴ նախագահն անհիմն էր համարել Փաշինյանի հասցեին հնչող դավաճանության մեղադրանքները:



Հաջորդ առիթը ստեղծվեց, երբ վարչապետ Փաշինյանը մասնակցեց առցանց կազմակերպված [ՀԱՊԿ](#) և [Եվրասիական միջկառավարական](#) խորհրդի նիստերին: Իսկ արդեն նիստերի ավարտից հետո լրատվամիջոցներում և սոցիալական ցանցերում սկսեցին ակտիվ քննարկվել ինչպես Փաշինյանի, այնպես էլ Ռուսաստանի նախագահ Պուտինի ելույթները: Պուտինը, մասնավորապես, ԼՂԵՂ էր, թե պատերազմի ավարտն ազդարարող փաստաթուղթը, որը ստիպված է եղել ստորագրել Փաշինյանը, պահանջում էր տղամարդկային որակներ, և հավելել, որ պետք է սատարել Փաշինյանին և իր թիմին տարածաշրջանում հետագա խաղաղության հաստատման գործընթացը կյանքի կոչելու համար: Այս կապակցությամբ Hraparak.am կայքը [գրեց](#), որ ՀԱՊԿ նիստի ժամանակ Վ.

Պուտինի ««քաջալերիչ» խոսքերը Փաշինյանի մասին բերկրանքով են լցրել իշխանավորներից շատերի սրտերը»: «Նրանց շարքերում հաղթական տրամադրություններ են: Բայց այս հիվանդ հրճվանքը, ավաղ, իշխանությունների և ի դեմս Նրանց՝ մեր պետականության վերջնական կորստի վերջին վկայություններն են», - վստահաբար պնդել էր կայքը: Ինչ վերաբերում է Փաշինյանի ելույթների արձագանքներին, ապա դրանք չէին հատում ծաղրանքի և ատելության խոսքի սահմանը:

Այսպես, վերջերս հայկական որոշ լրատվամիջոցներում ինֆորմացիայի հիմնական աղբյուրներից մեկը դարձած Mediaport տելեգրամյան ալիքն արտատպել էր ռուս լրագրող Անդրեյ Կոլեսնիկովի՝ «Կոմերսանտ» թերթում տպագրված [հոդվածը](#), որում հեղինակը ծաղրական և հեգնական տոնայնությամբ ներկայացնում էր Նիկոլ Փաշինյանի՝ ՀԱԿԿ-ի նիստում ունեցած ելույթը: Հեղինակը, մասնավորապես, շեշտը դրել էր ելույթի այն հատվածի վրա, որում Փաշինյանը գրպանից հանում է բջջային հեռախոսները, որոնց պատճառով իր ձայնի հետ կապված տեխնիկական խնդիրներ էին առաջացել:

«Հայաստանի վարչապետը, տեսախցիկներից թաքցնելով, գաղտագողի դրանք հրեց իրենից աջ, նա չէր ցանկանում գործընկերների աչքին երևալ, քանի որ այդ ամենը մի փոքր ամոթալի էր երևում»,- գրել էր հեղինակը և հավելել, թե «կապի ժամանակակից միջոցների հետ նման վերաբերմունքով 21-րդ դարում պատերազմ չես հաղթի»: Mediaport ալիքին հղում անելով՝ մի շարք լրատվամիջոցներ [վերատպել էին](#) հոդվածից հատվածներ՝ Կոլեսնիկովին ներկայացնելով որպես Կրեմլի ոչ պաշտոնական խոսնակ:

Իսկ ՀՀԿ-ական Արմեն Աշոտյանը ֆեյսբուքյան իր էջում վստահաբար պնդում էր, թե Փաշինյանը ոչ մի խոսք չի ասել Արցախի մասին, և [հավելում](#). «Այ դավադիր ստահակ: Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին Արցախի մասին մի բառ անգամ չասեցիր: Պատերազմի տնտեսական հետևանքների առիթով Արցախից ասելիք չկա՞ր: Քեզ թվում է, Արցախը մսխեցիր ու մոռացա՞ր: Ծեծ կերած շան պես երկիր ներկայացնելու իրավունք այլևս չունես»:

Նիկոլ Փաշինյանի հրաժարականի պահանջը

Եռակողմ համաձայնագրի կնքումից անմիջապես հետո ընդդիմադիր դիրքավորված 17 կուսակցությունները սկսեցին տարբեր մեթոդներով պահանջել վարչապետի հրաժարականը՝ այդ թվում բողոքի ակցիաների և հանրահավաքների: Ի պատասխան այդ ցույցերի, մի քանի անգամ կազմակերպվեցին վարչապետին աջակցողների հավաքներ: Այդ օրերին մեդիատիրույթում ծավալվում էր դիսկուրսը, թե ովքեր են վարչապետի հրաժարականը պահանջող ցուցարարները և ովքեր Նրա աջակիցները:

Ուլքեր ում ցույցին են մասնակցում

Վերը նշված դիսկուրսի ծավալման հիմնական առիթը դեկտեմբերի 8-ին Նիկոլ Փաշինյանի հրաժարականը պահանջողների ցույցից անմիջապես հետո տեղի [ունեցած](#)՝ վարչապետի աջակիցների ակցիան էր:

Աժ նախկին պատգամավոր Միհրան Զակոբյանի [պնդմամբ](#)՝ ցույցի մասնակիցները «փոքրաթիվ տականքներ» են, որոնք չեն հասկանում, թե ինչ վիրավորանք են հասցնում ժողովրդին, երբ ասում են՝ ժողովուրդն աջակցում է Նիկոլին:

Արդարադատության նախկին նախարար Արփինե Զովհաննիսյանն էլ իր \$եյսբուքյան էջում [գրել էր](#). «Մոլի նիկոլականների համար, փաստորեն, ժողովուրդը երկրի հոգևոր առաջնորդները չեն, արժանապատվություն ունեցող քաղաքացիները չեն, այլ 5000 երեխու գլուխ կերած դավաճանին սատարողները... Դուք 2018-ին փողոց դուրս եկած մարդկանց անվանեցիք ժողովուրդ: Հիմա ձեր իսկ չափանիշով: Ո՞րն է ժողովուրդը. արժանապատվություն ունեցող հազարավոր քաղաքացիներ՞ը, թե 30 հոգանոց խմբա՞կը, որը Ջաբրայիլը Քարվաճառից չի տարբերում: Ի դեպ, ձեր ու ձեր շեֆի հայելային արտապատկերն է՝ հայրենիքը չճանաչող, քարտեզ չիմացող, տեղանքին անտեղյակ»:

Իսկ «Հրապարակ» թերթը դեկտեմբերի 11-ի համարի «Այս կեղտոտ լեքսիկոնը Նիկոլ Փաշինյանը մտցրեց մեր օրակարգ» հոդվածում, հղում անելով տեղեկատվական հարթակներից մեկին, գրեց, թե «Իմ քայլի» պատգամավոր Հայկ Սարգսյանը 5 հազար դրամով ցուցարարներ է հավաքագրում, որպեսզի փակեն Սպիտակի համայնքապետարանի մուտքը՝ թույլ չտալով Փաշինյանի հրաժարականը պահանջած համայնքի ղեկավար Գագիկ Սահակյանին և ավագանու անդամներին մուտք գործել աշխատավայր:



Իսկ գուգահեռ իրականության մեջ, «Ժամանակ» թերթի աղբյուրների պնդմամբ, ընդդիմադիր կուսակցությունների կազմակերպած ցույցերին մասնակցելու համար կրպակներից մեկ մասնակցին մինչև 40 հազար դրամ գումար են առաջարկել: *«Այս առումով ակտիվ են հատկապես Կոտայքի և Արարատի մարզերը, այդ մարզերի համայնքները, քանի որ այդ մարզերը գտնվում են հայտնի խնամի օլիգարխների ազդեցության գոտում»*, - գրել էր թերթը դեկտեմբերի 9-ի համարի «Փողի դիմա՞ց, թե՞ ինքնակամ. ինչու են համայնքապետները պահանջում վարչապետի հրաժարականը» վերնագրով հոդվածում:

Մինչև հաշվետու ժամանակահատվածի վերջին օրն էլ ընդդիմությունը շարունակում էր փնտրել վարչապետ Փաշինյանի հրաժարականին հասնելու արդյունավետ միջոցներ: 17 կուսակցությունները հասարակության մի ստվար զանգվածին վիրավորելը համարու՞մ են այդպիսի միջոց, թե՞ ոչ՝ հայտնի չէ, սակայն նրանց շարքերում եղած որոշ հանրային դեմքեր միաձայն սկսեցին պիտակավորել իրենց պահանջը չկիսող մարդկանց:

Հանրապետական Արմեն Աշոտյանը, օրինակ, [գրեց](#). *«17+ կուսակցություններին դե՞մ եք, դե դիմավորեք թուրքին, այ ժեխ»*:

Իսկ այդ ժամանակ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Չոհրաբյանը մեկ գրառման մեջ 6 անգամ կառավարությանն աջակցող քաղաքացիներին [անվանեց](#) «ժեխ»: